+

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N50

Մարտունի 26.082024թ.

Առաջարկում եմ ավագանու քննարկմանը ներկայացնել Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում կառուցվելիք կրթհամալիրի շենքի անմիջապես տեղակայման հատվածում առկա է թվով 35 /երեսուն հինգ/ հատման ենթակա ծերացած ծառեր, որոնք խոչնդոտում են շինարարական աշխատանքների մեկնարկին; Շինարարական աշխատանքները սկսելու նպատակով անհրաժեշտ է թվով 35/երեսուն հինգ / բարդենու ծերացած ծառեր հատել, հետագայում նշված տարածքը համալրելով կլիմային հարմարվող նոր ծառատեսակներով;

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մադինա
բնակավայր, , Հեռ. 0262 6-19-90 , madinagp@rambler.ru

N 70
26 օգոստոսի 2024 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Հ.ՀՈՎԵՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովեյան

Մարտունու համայնքի Մադինա բնակավայրի վարչական տարածքում/կադաս. ծածկագիր 05-062-0020-0007 / կառուցվող կրթահամալիրի կառուցմանը խոչընդոտ է հանդիսանում տարածքում գտնվող թվով 35 ծառներ :

Խնդրվում է Ձեզ ծառերը հատելու համար հարցը ներառել առաջիկա ավագանու նիստում, ավագանու համաձայնությունը ստանալու համար:

ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ՍԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N_____ « » _____2024թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու
համայնքի ղեկավար պարոն Հովհաննես Հովեյանին

Հարգելի պարոն Հովեյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներգրավվածությամբ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) շրջանակներում Մադինա բնակավայրում կառուցվելու է կրթահամալիր: Կապալառու կազմակերպության՝ «Բուդլիդեր-17» ՍՊԸ-ի կողմից ստացել ենք տեղեկատվություն (գրությունը կցվում է), որ նոր շինության տեղակայման տարածքում առկա է թվով 35/երեսունհինգ բարդի տեսակի ծառ, որոնք խոչընդոտում են շինարարական աշխատանքների իրականացմանը: Մեր մասնագետների կողմից իրականացված դաշտային ուսումնասիրությունների և բնակավայրի վարչական ղեկավարի հետ քննարկումների արդյունքում պարզվել է, որ վերը նշված ծառերը տնկվել են ավելի քան հիսուն տարի առաջ, գտնվում են անմխիթար վիճակում և վտանգ են ներկայացնում ուժեղ քամիների և ուժգին անձրևների ժամանակ: Նշված ծառերի հատումը անխուսափելի է նոր շինության կառուցումը ապահովելու համար: Հատված յուրաքանչյուր ծառի փախարեն դպրոցի տարածքում կտնկվի տարածքին և բնակլիմայական պայմաններին հարմար երկու նոր ծառ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը և շինարարական աշխատանքների իրականացման անհնարինությունը՝ առանց նշված ծառերի հատման, պատասխան գրությամբ անհրաժեշտ է Ձեր թույլտվությունը՝ ծառահատման աշխատանքները կազմակերպելու համար:

Առդիր 1/մեկ էլ. նյութ

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
Հեռ. (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
Tel. (37410) 247 123

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի

տնօրեն Սարգիս Բաղինյանին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ԲՈՒԴԼԻԴԵՐ-17» ՍՊԸ -ի և «ԱՊ ԳԼՈԲԱԼ» ՍՊԸ -ի միջև 2024թ. հունիսի 05-ին կնքված N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-պայմանագրի շրջանակում ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Մադինայի բնակավայրերի կրթահամալիրի կառուցվելիք կրթահամալիրի շենքի անմիջապես տեղակայման հատվածում և շենքին մոտ հատվածներում առակ են թվով 35 /երեսունհինգ/ ծառեր, որոնք խոչընդոտ են հանդիսանալու շինարարական աշխատանքների մեկնարկի ժամանակ:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ խնդրի լուծման հետ կապված:

Հարգանքով՝ «ԲՈՒԴԼԻԴԵՐ-17» ՍՊԸ

Հայաստանյան մասնաճյուղ (ԱՍ)-ի տնօրեն Նարեկ Հովհաննիսյան

31. 07 ,2024թ